

**ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԳԻՏԱԲԱՌԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ
ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՐԴԻ
ՀԱՅԱԼԵԶՈՒ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ**

Սողոմոնյան Լուսինե

Քաղաքագիտության մագիստրոս

Հայոց լեզվի պահպանության հիմնախնդիրը չափազանց կարևոր է հայապահպանության, ազգային ինքնության, կրթական որակի, ապագա սերնդի դաստիարակության, պետություն-հասարակություն հարացույցում հաղորդակցման, ամուր պետականության և մի շարք այլ տեսանկյուններից: Լեզուն, խոսքային արտահայտությունն անհատի զարգացման հարցում վճռորոշ դերակատարում ունի: Լեզուն, ազգային դիմագիծը բնորոշող գլխավոր բաղկացուցիչներից է: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ լեզուն կադապարված չէ և ժամանակի ընթացքում անցել է լուրջ փոփոխությունների շրջափուլ, ինչն էլ հավաստում է նրա մասին, թե որքան փոփոխվում և փոխառությունների շրջանակով ընդլայնվում է լեզուն, նույնքան էլ հարստանում է: Հայ լեզվաբան, լեզվաբանության երախտավոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս՝ Էդուարդ Աղայանն /1913-1991թթ./ ասում է. «Լեզվի զարգացումը տեղի է ունենում ոչ թե հանկարծակի պայթյունների միջոցով, այլ լեզվի գոյություն ունեցող քերականական կանոնների աստիճանական, երկար դարերի ընթացքում կրած փոփոխություններով, նոր կանոնների առաջացումով ու հենքի վերացումով և բառային կազմի հարստացումով ու բազմակողմանիացումով: Փոփոխություններն արտահայտվում են երկու կարգով՝ քերականական իմաստների փոփոխություններ ու քերականական ձևերի փոփոխություններ: Օրինակ՝ գրաբարում ամենատարածված հոգնակերտ մասնիկն էր ք-ն (քաղաքք, այգիք, ծառք, տունք և այլն)..., կամ աչք, ոտք, ձեռք, բերք, տեսք և այլ բազմաթիվ բառեր այդ ձևով հոգնակի էին, ապա ժամանակի ընթացքում գիտակցում են սոսկ որպես գոյականներ՝ եզակի թվով, որ և բնականաբար շփոթություն է առաջ բերում հոգնակիի կազմության մեջ. մի շարք բառեր ք

վերջավորությամբ հոգնակի են, իսկ մի շարք բառեր էլ՝ եզակի»¹: Եթե մի քանի տասնամյակ առաջ քաղաքական խոսույթում գործածում էր **ռևոլյուցիա, պարտիա**, ձևերը, այժմ դրանք իրենց կիրառությունը գտնում են հետևյալ կերպ. հեղափոխություն, կուսակցություն: Սույն մտքից եզրակացնում ենք, որ բառերի այս փոփոխության արդյունքում տեղի է ունեցել լեզվապահպանության տեսանկյունից բարենպաստ տեղաշարժ, քանի որ ռուսերեն բառերի գործածումը փոխարինվել է հայերերնով: Սակայն, այստեղ կարող ենք առաջ բերել երկու տեսակետ.

1. Լեզուն, որը հարստանում է համաձայն ներքին լեզվական, քերականական, ոճագիտական, նորաբանությունների տեսանկյունից ընդունելի կառուցվածքներով, միանշանակ, նպաստում է լեզվի հարստացմանը: Օրինակ՝ պրոֆեսոր բառն ունի միջազգային կիրառություն և նույնը կիրառելով մեր լեզվում՝ չենք կարող արձանագրել լեզվի անկման կամ լեզուն վնասելու որևէ դրսևորում: Նույն կերպ՝ կանցլեր, ագրեսիա, էթիկա և այլ բառերի դեպքում:

2. Լեզուն, որը հարստանում է օտարաբանությունների կամ այնպիսի ձևերի կիրառությունների ներմուծմամբ, երբ հեշտորեն հնարավոր է լեզվի ներքին հնարավորություններով փոխարինել համապատասխան բառերը, սակայն ներմուծվում է օտար կառուցվածքով՝ միայն վնասում է կամ մեծ վտանգներ է պարունակում լեզվի պահպանության տեսանկյունից: Սա չափազանց կարևոր է հանգամանք է և ունի վերանայման խիստ անհրաժեշտություն, քանի որ մեզանում լայն տարածում է գտել նմանատիպ կիրառությունների տարածումը: Օրինակ՝ **րիտորիկա** բառի հայերեն փոխարժեքը **հռետորաբանություն** բառն է, մինչդեռ քաղաքական մի շարք գործիչների խոսույթում տարածված կիրառություն է գտնում հենց **րիտորիկա** ձևը: Նույն կերպ՝ կոնսերվատիզմ-պահպանողականություն, լեզալ-օրինական, քաղաքական խոսույթում հաճախակի տարածում գտած՝ լիդեր-առաջնորդ, դեմարկացիա-սահմանազատում, դելիմիտացիա-սահմանագծում, էլիտա-

¹ Տե՛ս Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Եր., 1963, էջ 492-495:

ընտրանի, պառլամենտ-խորհրդարան, պրեզիդենտ-նախագահ և մի շարք այլ բառերի կիրառություններ:

Լեզվի պահպանության կարևորագույն ցուցիչ է հանդիսանում ոչ միայն խոսքի գրագետ, արտահայտիչ, հնչեղ, քերականական ու ոճագիտական առումով ճշգրիտ արտահայտությունը, այլև դրա նպատակային, պատշաճ ու տեղին կիրառումը: Յուրաքանչյուր միջավայր պահանջում է իրեն համապատասխան բառաշերտ, իսկ այդ միջավայրում հաղորդակցումն իրականացնողը անհատն է, որը գլխավոր թելադրողն է լեզվական ճշտության պահպանման: «Լեզվի առաջին ու կարևորագույն հատկանիշներից մեկը նրա ընդհանուր, համաժողովրդական բնույթն է»²: Սրանից հետևում ենք, որ համամարդկային լեզու, մի լեզու, որն ունակ է ծառայել աշխարհի բոլոր ազգերին՝ գոյություն չունի, սակայն կան առանձին լեզուներ՝ ինչպես Հայաստանում՝ հայերեն/որպես պետական լեզու՝ արևելահայերեն/, Իսպանիայում՝ իսպաներեն, Իտալիայում՝ իտալերեն, ՌԴ-ում՝ ռուսերեն և այլն:

Փաստաթղթային կազմակերպման շրջանակներում ևս կա գրագրային ճշգրտման անհրաժեշտություն: Նշենք ՀՀ Լեզվի մասին օրենքի հետևյալ հատվածը. «Պաշտոնատար անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են տիրապետել գրական հայերենին: Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն գրական հայերենն է, եթե դա չի հակասում տվյալ միջազգային առյուծանուն ընդունված կարգին: Պաշտոնական խոսքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են ապահովել գրական հայոց լեզվի անաղարտությունը»³: Սույն օրենքն, ինքնին, պարտավորեցնում է յուրաքանչյուր հայի, քանի որ դրա կիրառականության և պահպանման արդյունքում է ամրագրվելու և ունենալու իր հասցեական նշանակությունը սույն հոդվածի վերտառության համատեքստում:

Ինչպես արդեն վերը նշեցին, յուրաքանչյուր միջավայր թելադրում է իր շրջանակին համապատասխան բառամթերք: Ուստի, խախտելով վերոգրյալը, թյուրըմբռնում է առաջանում ոչ միայն իմաստաբանական տեսանկյունից, այլև գործածական: Ներկայումս ՀՀ-ում

² Տե՛ս Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Եր., 1963, էջ 7:

³ ՀՀ օրենքը լեզվի մասին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=90418>

քաղաքական խոսույթում գործածելի են դարձել մի շարք սխալներ, որոնց կանխման համար պետք է աշխատել այն գործիքակազմով, որը զսպողակ կհանդիսանա դրանց կիրառման համար: Յիտենք լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Եզեկյանի /1941-2016թթ./ հետևյալ միտքը. «...հայերենում կարելի է տարբերակել գործառական հետևյալ ոճերը՝ **գիտական, պաշտոնական, հրապարակախոսական, առօրյա-խոսակցական և գեղարվեստական**: Գործառական յուրաքանչյուր ոճ ունի իր առանձնահատկությունները, լեզվական միջոցների գործածության յուրահատուկ համակարգն ու հաճախականությունը, իր ոճակազմիչ հատկանիշները, ինչպես տարատեսակները կամ ենթաոճերը, որոնք երբեմն կոչում են նաև խոսքային ոճեր կամ «խոսքային ժանրեր»»:⁴ «Հրապարակախոսական ոճն անվանվում է նաև լրագրային - հրապարակախոսական (ՁԼՄ-ների լեզուն)»:⁵ «ՁԼՄ-ների նպատակներն ու գործառույթները պայմանավորում են նրա ընդհանուր հատկանիշներն ու լեզվական յուրահատկությունները: Դրանք են՝ 1. Լրատվական բառապաշարը: Այսպես՝ հարց բառը «ազգային հարց» բառակապակցության մեջ ունի լրագրային - հրապարակախոսական երանգ, 2. Գնահատողական բառաշերտ՝ ինչպես՝ ռասիստական խեղկատակություն, անհեռատես քաղաքականություն, զավչիթ գործողություններ: 3. Գաղափարակիր բառեր՝ կուսակցություն, կազմակերպություն, խորհրդարան, երկրապահ, դաշնակցություն: 4. Մասնագիտական բառապաշար՝ հիվանդ հասարակարգ, դոնոր երկրներ, քաղաքական դիմակահանդես: 5. Կայուն կապակցություն՝ ՀՀ Ազգային ժողով, Հայաստանի Հանրապետություն, ՌԴ պետական դուրմա...»:⁶ Այսպիսով, լեզվի մասին օրենքների մշակումն ու կիրառությունը և ընդհանրապես, լեզվաքաղաքականության իրականացումը պետք է առաջնահերթություն լինի պետական քաղաքականության մշակման տեսանկյունից, քանի որ լեզուն ազգի, պետության հարատևման գլխավոր գրավականներից է հանդիսանում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային հարթակներում քաղաքական, դիվանագիտական և այլ շրջանակներում տեղի են

⁴ Տե՛ս **Եզեկյան Լ.**, Ոճագիտության ուղեցույց, Եր., Զանգակ-97, 2007, էջ 11:

⁵ Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 293:

⁶ Նույն տեղում՝ էջ 372-375 :

ունենում խոսքային արտահայտության տեղաշարժեր, հասկանում ենք, որ երբեմն «պարտադրվում են» այնպիսի տերմիններ, որոնց գործածմամբ միայն ամբողջական ու միասնական կարող է դառնալ տվյալ տիրույթի հաղորդակցումը: Սա հաճախակի հանդիպում է պաշտոնական հանդիպումներում: Օրինակ՝ **կոնֆլիկտ, էսկալացիա, սեպարատիզմ, սաբոտաժ, կոնցեպցիա** և այլն: «Պաշտոնական ոճը հաճախ անվանում են նաև վարչա-գործարարական»:⁷

Լեզվի կարևորության ու դերի մասին ամերիկացի հասարակագետ, քաղաքագետ Սամյուել Հանթինգտոն /1927-2008թթ./ ասում է. «Ցանկացած մշակույթի կամ քաղաքակրթության գլխավոր տարրերից է հանդիսանում լեզուն և կրոնը: Եթե հիմա ծնվի ունիվերսալ քաղաքակրթություն, նշանակում է, պետք է ի հայտ գա անհրաժեշտություն՝ ունիվերսալ լեզվի և ունիվերսալ կրոնի»:⁸

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Էդվարդ Աթայանն /1932-2002թթ./ ասում է. «Բուն լեզուն հասարակականորեն գոյացած և անհատի մեջ հաղորդակցականության անհրաժեշտությամբ պահպանվող մի պատկեր է, որում յուրացված և մտային հեռանկարի ձևով դասավանդված են ընդհանուր, այդ իսկ պատճառով սոցիալական արժեք ունեցող բովանդակություններ...»: Ուստի, լեզուն հասարակության հաղորդակցության ապահովման միակ միջոցն է, իսկ նպատակը՝ մայրենի լեզվի կանոնական պահպանությունն ու արժևորումը: Լեզվաբանության նպատակն է՝ լուսաբանել մարդկային լեզվի ծագման պրոցեսը, գտնել լեզվի զարգացման ներքին օրենքները, ցույց տալ նրա տեղն ու դերը հասարակության կյանքում և տալ այն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվել յուրաքանչյուր լեզվի ու լեզվական երևույթի հետազոտության բնագավառում: Սակայն, հենց այդ տեսական խնդիրների լուծմամբ էլ լեզվաբանությունն ստանում է նաև միանգամայն գործնական բնույթ: Երևան հանելով լեզվի զարգացման օրինաչափությունները՝ նա, մի կողմից նպաստում է լեզվի ու նրա քերականության ուսուցմանը, մյուս կողմից բացում է մեր առջև լեզուների հետագա լեզվաշինարարության գործում»:⁹ Հետևելով սույն մտքին, փասենք,

⁷ Նույն տեղում՝ 292 էջ:

⁸ Хантингтон С., Столкновение цивилизаций, Москва, АСТ, 2020, с. 84.

⁹ Տե՛ս Ադայան Է., Լեզվաբանության ներածություն, Եր., 1963, էջ 7:

որ լեզվական օրինաչափությունների պահպանման համար, հատկապես սույն հոդվածի շրջանակներում, հարկ է ուժեղացնել լեզվական քաղաքականության միջոցառումները, անհրաժեշտ է ամենատարբեր հարթակներում տարածել ու խթանել լեզվի պահպանմանը միտված մի շարք միջոցառումներ, հանրային դաշտում պահանջելի դարձնել դրա ճշգրիտ ու գրագետ մատուցումը: «Քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը քաղաքագիտության շրջանակներում առաջին հերթին ուղղված է քաղաքական գործիչների խոսքի, քաղաքական մտածելակերպի և խոսքային արտահայտություն ունեցող այլ միավորների վերլուծությանը լեզվական տվյալների միջոցով, որի իրականացման համար հետազոտողներն առաջարկում են բազմաթիվ մեթոդներ: Այս համատեքստում մեջբերենք քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ Էմիլ Օրդուխանյանի հետևյալ միտքը. «... Այդ մեթոդների շարքում առավել տարածված են *համալրեքսի վերլուծության (կոնտենտ-վերլուծություն), կոգնիտիվ (ճանաչողական), գաղափարախոսական, նկարագրական, քննադատական վերլուծության կոնֆլիկտ-խոսութային և այլ մեթոդներ*»¹⁰: Եթե այս մեթոդները կիրառելի լինեն ՀՀ քաղաքական դաշտի վերլուծությունների, ելույթների և ընդհանրապես, քաղաքական խոսքի կառուցման համատեքստում, միանշանակ, այն իր դրական ազդեցությունը կգտնի նաև լեզվի պահպանության գործում: Մինչդեռ, մենք ականատես ենք լինում այնպիսի քաղաքական խոսքի, որն ինքնին, օտարում և արհամարհում է գիտականորեն և հիմնավորապես ապացուցված վերոնշյալ մեթոդների գոյությունը: Օրինակ՝ ՀՀ ԱԺ 8-րդ գումարման պատգամավորների ելույթները պայմանավորված իշխանություն-ընդդիմություն ծայրահեղ լարված իրողությամբ, շատ հաճախ, հնարավոր չի լինում վերլուծության ենթարկել ո՛չ քաղաքական գործչի ելույթը, ո՛չ էլ հարց-պատասխան ձևաչափով տեղի ունեցած խոսույթը: Սա, ինքնին, բխում է ներքաղաքական սուր և ծայրահեղ հակընդդեմ անհամաձայնություններից, որը, անմիջականորեն վնասում և աղավաղում է ելույթի որակը, դարձնում անկենսունակ և քաղաքական բանասիրության տեսանկյունից խիստ վնասակար և խոցելի: Քաղաքական խոսույթը լայնորեն ուսումնասիրվում է քաղաքական բանասիրության շրջանակներում:

¹⁰ Տե՛ս **Օրդուխանյան Է.**, Քաղաքական խոսույթ, Լիմուշ, Եր., 2016, էջ 29 :

Լեզվի պահպանության հիմնախնդիրը բոլոր ժամանակներում է եղել արդիական, իսկ այսօր՝ դարձել մեծ խնդիր: ՀՀ-ում այս հիմնախնդիրը խիստ առաջնահերթություն է դարձել, հատկապես քաղաքական խոսույթի համատեքստում: Սույն վերտառությամբ հոդվածով ցանկանում ենք առաջ քաշել քաղաքական խոսույթում կիրառվող մի շարք լեզվական խնդիրներ, որոնք պահանջում են շուտափույթ լուծում կամ գոնե նմանատիպ խնդիրների առաջացման կանխում: Հաճախ, հետևելով ՀՀ-ում ընթացող քաղաքական ելույթների բովանդակությանը, նկատում ենք, որ իմաստային տեսանկյունից դրանք արժեզրկվում են, քանի որ տվյալ խոսույթն ու համապատասխան ոճին՝ (պաշտոնական ոճ կամ վարչագործարարական) բնորոշ բառաշերտն այնքան է հեռացած պահանջվող շրջանակներից, որ կորցնում է իր հասցեականությունը: ՀՀ-ում, հատկապես բարձրագույն ամբիոնից՝ Ազգային ժողովից հնչող ելույթներն իսկական մարտահրավեր են հանդիսանում լեզվի աղավաղման տեսանկյունից: Հաճախակի, դրանք շեղվում են բուն գործառական ոճի՝ պաշտոնական կամ վարչա-գործարարական ոճից և դառնում սովորական անկենսունակ բանավեճի նմանվող ելույթ: Այս թեմայի ուսումնասիրությունը, հատկապես վերջին տասնամյակներին, մեծ ուսումնասիրության է արժանացել ՀՀ գիտական հանրույթի կողմից: Սա, թերևս 1991թ.-ի ՀՀ-ի անկախացումից հետո իշխանություն-ընդդիմություն հարացույցում ձևավորված խիստ հակադիր և սուր քննադատություններով հագեցած դրսևորումների արդյունք է: Սակայն, սա որևէ արդարացում չի կարող լինել ոչ միայն քաղաքական արդյունավետ երկխոսության բացակայության, այլ նաև ծավալվող խոսույթի միջոցով լեզուն վնասելու և աղավաղելու տեսանկյունից:

Ինչպես արդեն նշեցինք, կան հարթակներ, ինչպես օրինակ միջազգային, դիվանագիտական, որտեղ շատ դեպքերում անհրաժեշտ է լինում խոսել օտար լեզվով և անհրաժեշտություն է առաջանում թարգմանչի մասնակցության: Նշենք, որ այս պարագայում կարևոր է օտար լեզվից հայերենն հայերենից օտար լեզվի մասնագետների թարգմանչական մի շարք հմտություններ, որը թույլ կտա արհեստավարժ կերպով իրականանելու պահանջված թարգմանությունը, քանի որ սխալ մտքի կամ հատվածի մատուցումը կարող է վնասել տեքստի իմաստային ու քերականական ճշգրտությանն ու մաքրությանը: Քաղաքական խոսույթը լեզվարտահայտչական տե-

սանկյունից պահանջում է հատուկ մոտեցում, լեզվական որոշակի դրսևորում, որին պետք է տիրապետեն քաղաքական գործիչները: Լեզվաբանությունը զբաղվում է նաև քաղաքական իրողությունների լուսաբանմամբ և ուսումնասիրմամբ: Առանց քաղաքական խոսույթի չկա քաղաքականություն: Քաղաքական խոսույթի ուսումնասիրությունն իրականանում է քաղաքական բանասիրության շրջանակներում: Քաղաքական խոսույթը հարուստ է գոյականների, դերանունների, շաղկապների, կրկնաբանությունների, հոմանիշների ու հակահիշների կիրառմամբ, ինչպես նաև աստիճանավորման, փոխաբերության, հռետորական հարցի, հեգնանքի, մեղմասացության և լեզվի արտահայտչական դրսևորումների այլ ձևերով:

«Քաղաքական հաղորդակցության մեջ քաղաքական խոսույթը կարելի է դիտարկել լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով խոսույթ (խոսութային) վերլուծության համատեքստը ներառում է գործող անձանց, օբյեկտները, հանգամանքները, ժամանակահատվածը, գործողությունները և այլն: Այս դեպքում քաղաքական խոսույթի տարրեր են համարվում տեղի ունեցող իրադարձությունները, դրանց մասնակիցները և սոցիալական համատեքստը: Նեղ իմաստով քաղաքական խոսույթը մասնագիտացված տեքստ է, որն ունի իրեն ներհատուկ լեզու: Իմի բերելով երկու մոտեցումները՝ կարելի է նշել, որ քաղաքական խոսույթը բանավոր և գրավոր տեքստերի փոխանակումն է որոշակի պատմական, սոցիալական և քաղաքական ժամանակում»:¹¹

Ռուս լեզվաբան Վալերի Դեմյանկովն /1948թ./ իր «Քաղաքական խոսույթը՝ որպես քաղաքագիտական բանասիրության առարկա» հոդվածում ասում է. «Քաղաքական բառապաշարը տերմինաբանական է, և ոչ սովորական, լեզվական նշանները միշտ չէ, որ օգտագործվում են այնպես, ինչպես սովորական լեզվում, դիսկուրսի կառուցվածքային յուրահատկությունը արդյունք է խոսքի տեխնիկայի, սպեցիֆիկ է նաև խոսույթի իրականացումը՝ նրա հնչյունային և գրավոր ձևավորումը: Քաղաքական խոսույթը դիտարկվում է առնվազն երեք տեսանկյունով.

¹¹ Տե՛ս **Օրդուխանյան Է.**, Քաղաքական խոսույթ, Լիմոն, Եր., 2016, էջ 19 :

¹² **Демьянков В.,** ПОЛИТИЧЕСКИЙ ДИСКУРС КАК ПРЕДМЕТ ПОЛИТОЛОГИЧЕСКОЙ ФИЛОЛОГИИ. <http://www.philology.ru/linguistics1/demyankov-02.htm>

1. Բանասիրական, որն ինչպես յուրաքանչյուր տեքստ, կուսումնասիրվի քաղաքագիտական բանասիրության կողմից,
2. Հասարակական-հոգեբանական, երբ պետք է որոշել հասցեագրողի քաղաքական նպատակներին հասնելու արդյունավետությունը, որը կուսումնասիրվի քաղաքագիտական գրականության կողմից,
3. Անհատահերմենևտիկական, երբ որոշակի պայմաններում պետք է վեր հանել հասցեագրողի կամ մեկնաբանի անձնական իմաստները, որը կուսումնասիրվի քաղաքագիտական լեզվաբանության կողմից»:¹²

Ինչպես գիտենք, ՀՀ-ում 1991թ.-ի անկախացումից ի վեր ընդունվել ու մշակվել են լեզվի պահպանությանն ուղղված բազմաթիվ օրենքներ՝ ըստ ոլորտների և բնագավառների: Այս ուղղությամբ, նշենք, որ մեծ աշխատանք է տանում Լեզվի կոմիտեն¹³, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը¹⁴, Կրթության տեսչական մարմինը¹⁵, ԿԳՄՍ նախարարության համապատասխան վարչությունները¹⁶ և այլ պետական և ոչ պետական կառույցներ, որոնց գործունեության շրջանակը պատվում է հայոց լեզվի պահպանության ու զարգացման շուրջ:

ՀՀ-ում քաղաքական խոսույթի որակական գնահատման կամ չափման տեսանկյունից, զոնե վերջին տասնամյակներում, չենք կարող գրանցել դրական արդյունքներ կամ տեղաշարժ: Ինչպես գիտենք, քաղաքական խոսույթում խոսքային արտահայտության շրջանակներում տարածված են գնահատողական, պաշտպանական վերաբերմունք դրսևորող արտահայտությունները, բառերը: Հայոց լեզուն չափազանց հարուստ է լեզվարտահայտչական միջոցներով, որոնք, համապատասխանեցնելով քաղաքական խոսույթի բովանդակությանը՝ կարող ենք կիրառել և զերծ մնալ լեզվական սխալներից: ՀՀ-ում շատ հաճախ, ոչ միայն շեղումներ ենք նկատում քաղաքական ելույթների ընթացքում, այլև նկատում ենք դրանց միշտ կիրառելի են դարձել: 1991թ.-ի ՀՀ անկախացումից ի վեր, քաղաքական խոսույթի բովանդակային մասը կարող ենք բաժանել մի քանի հատվածի,

¹³ ՀՀ Լեզվի կոմիտե, <https://www.langcom.am/>

¹⁴ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, <http://language.sci.am/>

¹⁵ ՀՀ կրթության տեսչական մարմին, <http://www.eib.am/>

¹⁶ ՀՀ ԿԳՄՍՆ, <https://escs.am/am/home?s=edu>

որոնք իրենց արտահայտությամբ և բառային որակական և քաղաքական չափումների տեսանկյունից ունենց իրենց ուրույն տեղը թե՛ քաղաքական դաշտի լեզվարտահայտչական հնարքների և թե՛ հասարակական գիտակցության վրա, քանի որ լեզուն որպես հասարակական երևույթ, սերտորեն կապված է հասարակության հետ: Եթե խոսքն ապականում կամ արժեզրկում է լեզուն, վերջինս էլ, հաջորդաբար, ազդում է արտահայտած մտքի վրա: ՀՀ-ում շատ քաղաքական գործիչներ հաշվի չեն առնում այն փաստը, որ իրենց ելույթների հասցեատերերն ու իրացնողը հայ, ապա նոր միայն համաշխարհային հանրությունն է: Երբ քաղաքական ելույթը կազմված է լինում սոսկ պաշտոնական ոճին ներհատուկ բառաշերտով՝ դրանք կլինեն բառեր, բառակապակցություններ, հարադիր բայեր կամ պարզ ու բարդ նախադասություններ, դա թե՛ լեզվի և թե՛ մտքի տեսանկյունից կհնչի և կդիտվի կառուցիկ, ներկայանալի ու տպավորիչ: ՀՀ-ում քաղաքական ելույթները շատ հաճախ ապականված են լինում կոպիտ շեղումների և անթույլատրելի սխալների տեսքով: Հասկանալի է, որ օրինակ քաղաքական բանավեճն այն շրջանակն է, երբ քաղաքական գործիչներն ավելի ազատ և անկաշկանդ են սեփական մտքերն արտահայտելիս: Պարզապես, բազմաթիվ օրինակներ մեզ հուշում են նրա մասին, որ սա չի լինում քաղաքական տրամաբանության մեջ, այլ անցնում է անձնական դաշտ՝ հասնելով անպարկեշտ արտահայտությունների, վիրավորանքների, զրպարտությունների և ընդհուպ մինչև արժանապատվությանը լրջորեն վնասող մի շարք արտահայտությունների: Մեր օրերում քաղաքական խոսույթի բնական բաղադրիչներ հանդիսացող իշխանություն-ընդդիմություն, իշխանություն-հասարակություն եզրույթների շահարկումը ամբողջապես դուրս է սույն հոդվածի առաջին մասում նկարագրվող լեզվի ոճերի, համապատասխան կիրառությունների և մի շարք առանձնահատկությունների տիրույթից: ՀՀ-ն՝ որպես խորհրդարանական երկիր՝ քաղաքական ելույթների համար լավագույն հարթակ է ներկայացնում ԱԺ-ը: Այստեղ, ըստ պաշտոնական ոճի առանձնահատկությունների՝ պետք է կիրառվեն այնպիսի բառաշերտի պատկանող բառեր, որոնք կարտացոլեն ու կընդգրկեն քաղաքական գործընթացների կազմակերպման համար արդյունավետ ու օգտաշատ ընթացք: «Քաղաքական խոսույթն ըստ տիպաբանության լինում է գրավոր և բանավոր, ընթերցվող և չընթերցվող, քաղաքական ինստիտուտների տեսանկյունից՝ կոնֆլիկ-

տային և համաձայնության»¹⁷: Խոսույթների նշված տիպերը հնարավորություն են ստեղծում լայնորեն օգտվել և կիրառել լեզվարտահայտչական բոլոր հնարքները՝ ոչ միայն չվնասելով, այլ նաև օգնելով ու պահպանելով լեզվական բոլոր պահանջները:

Քաղաքական քառտիկ և ցնցումային իրավիճակների առաջացման պատճառներից է նաև լեզվի անկումը: Ուստի, ինչպես բոլոր ճակատներում, քաղաքական խոսույթի ճշգրտության ծիրում ևս մենք պետք է կատարենք բարեփոխումներ, լինենք հետևողական: Անգլիացի գրող Ջորջ Օրուելն(1903-1950թթ.) աղավաղված լեզվի բարեփոխման ու «առողջացման» տեսանկյունից տալիս է հետևյալ հրահանգները.

«1. Երբեք մի՛ օգտագործեք երկար բառ այնտեղ, որտեղ կարճն է հարմար:

2. Եթե հնարավոր է որևէ բառ դուրս հանել, հանե՛ք այն:

3. Երբեք մի՛ օգտագործեք կրավորական սեռը, եթե կարելի է օգտագործել ներգործականը:

4. Երբեք մի՛ օգտագործեք օտարաբանություն, գիտական տերմին կամ ժարգոն, եթե կարող եք դրա փոխարեն օգտագործել ամենօրյա բառ:

5. Ավելի լավ է խախտե՛ք այս բոլոր կանոնները, քան ասեք մի բան, որը լիովին բարբարոսություն է»¹⁸: Հետևելով այս մտքին, հասկանալի է դառնում, որ լեզվի բարեփոխությունների շարքին կարող են դասվել լեզվական այնպիսի կիրառություններ, որոնք ելույթին կհաղորդեն պարզություն և հանրամատչելի կլինեն ունկնդիրների համար:

Հայոց լեզվի, վերջինիս պահպանության ու վճռորոշ դերի մասին խոսել է նաև բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գրականագետ, մատենագետ՝ Ռաֆայել Իշխանյանը (1922-1995թթ.). «Այսօրվա պարագայում մեր թիվ մեկ ազգային հարցը գոնե Հայաստանում հայերի հայախոսության, հայագրության ու հայակրթության լիակատար վերականգնումն է: Առանց այս թիվ 1 հարցի լուծման, ուրիշ որևէ ազգային հարց լուծել չենք կարող: Հասկանանք վերջապես այս պարզագույն թվաբանությունը:

¹⁷ Տե՛ս **Օրդուխանյան Է.**, Քաղաքական խոսույթ, Լիմուշ, Եր., 2016, Էջ 24-25:

¹⁸ **Orwell G.**, Politics and the English Language. 1946,
<https://bioinfo.uib.es/~joemiro/RecEscr/PoliticsandEngLang.pdf>

Առհասարակ, այն ազգը, որ չի հարգում իր ազգային լեզուն, երբեք չի հաղթանակում, միշտ պարտվում է: Մեր՝ հայերիս մեն միակ ճիշտ ճանապարհը Հայաստանը (ներառյալ Արցախը) լիակատար հայախոս և հայագիր դարձնելն է:»¹⁹:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայերենը հայ ազգի ինքնության կարևորագույն հենասյուներից մեկն է: Այս առումով միանգամայն օրինաչափ է հայկական սոցիալ-մշակութային, գիտական ինտիտուցիոնալ մակարդակներում հայոց լեզվի հատուկ կարգավիճակի խրախուսումը և զարգացումը: Վերոգրյալը հիմք ընդունելով, փաստենք, որ ժանանակակից աշխարհում գիտությունը, մասնավորապես նորագույն տեխնոլոգիաները հումանիտար և բնական գիտությունների թռիչքաձև զարգացումը կանգնեցրել է այն հիմնախնդրի առջև, որ կենդանի խոսակցական լեզվամտածողության մեջ արմատավորվում են օտարածին սիմվոլներ, օտարալեզու արքետիպային հիմքի վրա կայացած գիտաբառեր: Նոր իրողություններով պայմանավորված «նոր մարտահրավերներն» ստիպում են մասնագիտական հանրույթին մեկնարկել գիտական բանավեճ, ազգային լեզվի արդիականացման ուղիների շուրջ: Որպես այդպիսին մենք առանձնացնում ենք հետևյալ ուղիները:

1. հայերեն համարժեքների ստեղծում, որոնք իրենց մեջ կամփոփեն այն նշանագիտական և գաղտնագիտական իմաստը, որոնք առկա են բնօրինակում,
2. օտարալեզու փոխառություններ որոնք, կկարողանան հարմարվել կենդանի լեզվամտածողության մեջ և կկարողանան ներդաշնակվել գիտական և գրական խոսույթում,
3. միջանկյալ կարգավիճակ ունեցող բառեր, որոնք ըստ էության փոխառություններ են, և իրենք հնչյունաբանական կառուցվածքային և բովանդակային իմաստով չեն կարողանում մերվել հայոց լեզվին, սակայն կիրառվում են հաճախ մայր լեզվի տեսքով, և հայկական շարվածքում բնօրինակի լեզվով են գրվում, հայերեն համարժեքի բացակայության պատճառով կամ անհաջող թարգմանության պատճառով:

¹⁹ Տե՛ս **Իշխանյան Ռ.**, Երրորդ ուժի բացառման օրենքը, Եր., 1991, էջ 154-155:

Ամփոփելով նշենք, որ հողվածում բերված օրինակներն հիմնավորում են վերոգրյալը, և առաջարկում են համապատասխան մոտեցումներ՝ հրավիրելով մասնագիտական հանրույթին մասնակցելու վերոգրյալ խորագրով պայմանավորված բանավեճին:

Բանալի բառեր. լեզվական առանձնակատկություններ, իշխանություն, ընդդիմություն, հանրություն, քաղաքական դաշտ, քաղաքական խոսույթ, օտարալեզու համարժեքներ:

ПРОБЛЕМА ПРИМЕНЕНИЯ АРМЯНСКИХ РАВНОЗНАЧНЫХ МЕЖДУНАРОДНЫХ ПОЛИТОЛОГИЧЕСКИХ ТЕРМИНОВ В СОВРЕМЕННЫХ АРМЯНО ЯЗЫЧНЫХ НАУЧНО- ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ РАБОТАХ

Согомонян Лусине
Магистр политологии

РЕЗЮМЕ

Армянский язык один из столпов национальной идентичности армянской нации. По этому совершенно закономерно поощрение и развитие обособного статуса армянского языка на социально-культурном, научном и институциональном уровнях. Основываясь на вышесказанное, следует подчеркнуть, что в современном мире наука, в частности передовые технологии, скачкообразное развитие гуманитарных, естественных и математических наук, поставили нацию перед новой проблемой: в живом разговорном языке укореняются иностранные символы, научные термины, которые в основе имеют инородные архетипы. Обусловление новыми реалиями, новые «угрозы» принуждают профессиональное сообщество к научным дебатам, по теме путей модернизации национального языка. Как таковые мы выделили следующие пути развития:

1. создания армяноязычных равнозначных, которые заключат в себе те семиотические и герменевтические смыслы, которые заключены в первоисточниках,

2. заимствование интернациональных терминов, которые могут адаптироваться в живом языковом мышлении и гармонично войти в научный и в литературный дискурс,

3. слова промежуточного значения, которые, по существу, являются заимствованиями и по своей форме, звучанию и смыслу содержания не способны ужиться с армянским языком, но часто употребляются в армяноязычных научных текстах, и в армянских текстах часто пишутся языком первоисточника: Такие научные термины употребляются в условиях отсутствия точных армяноязычных равнозначных или при наличии неточных переводов.

Обобщая вышесказанное, подчеркнём, что примеры, приведённые в этой статье, обосновывают вышесказанное, и предлагают соответствующие подходы приглашая научное сообщество участвовать в дебатах на эту тему.

Ключевые слова: языковые особенности, власть, оппозиция, социум, политическая сфера, политический дискурс, иностранные равнозначные.

THE PROBLEM OF THE USE OF INTERNATIONAL POLITICAL TERMS AND THEIR ARMENIAN EQUIVALENTS IN MODERN ARMENIAN - LANGUAGE RESEARCH PAPERS

Sghomonyan Lusine
MD in Political Science

SUMMARY

The Armenian language is one of the pillars of the national identity of the Armenian nation. Therefore, it is quite natural to encourage and develop the justified status of the Armenian language at the socio-cultural, scientific, and institutional levels. Based on the above, it should be emphasized that in the modern world, science, advanced technologies, the expeditious development of a mankind, natural and mathematical sciences, have put the nation in front of a new problem: foreign symbols, scientific terms, which are based on the foreign archetypes, take root in a living spoken language. As a result of a new realities, new "threats" force

the professional community to unfold tactics during the scientific debates in order to modernize the national language. As such, we have identified the following development paths:

1. creation of Armenian equivalents, which will contain those semiotic and hermeneutic meanings that are included in the primary sources,

2. borrowing international terms that can be adapted in living linguistic thinking and harmoniously enter scientific and literary discourse,

3. words of intermediate meaning, which are basically borrowings in their form. Their sound and meaning of the content are not able to get along with the Armenian language. However, they are often used in Armenian's scientific texts, moreover in Armenian- Russian texts they are often written in the language of the original source: such scientific terms are used because of the absence of an exact Armenian equivalents or in the presence of inaccurate translations.

Summarizing the above mentioned points, we want to emphasize that the examples given in this article substantiate it and offer appropriate approaches, inviting the scientific community to participate in the debate on this topic.

Key words: language features, power - opposition - society, political sphere, political speech, foreign equivalents.